

Տարագիրներ ու Երազողներ

20-րդ դարի սփյուռքահայ
գրաֆիկայի համայնապատկեր
Վիգեն Գալստյանի հավաքածու

Exiles and Dreamers

Panorama of 20th Century Graphic Arts
from the Armenian Diaspora
Vigen Galstyan's Collection



CAFESJIAN
CENTER FOR THE ARTS


ԵՐԵՎԱՆ | YEREVAN
2020





Ֆրանսահայ արվեստագետների «Անի» միության 1930-ի ցուցահանդեսի մասնակիցներ, որոնց շարքում էին այս ցուցադրությանը ներկայացված արվեստագետներ Էտկար Շահինը, Լեոն Մուրադովը, Արսեն Շապանեանը:

Participants of the exhibition organized by the Union of French-Armenian artists "Ani" in 1930, which include some of the artists featured in this exhibition: Edgar Chahine, Leon Muradoff and Arsene Chabanian.



«Անվերնագիր» (կոմպոզիցիա, կնոջ ֆիգուր), 1985
Թուղթ, ակվատինտ


Untitled (composition with a female figure), 1985
Aquatint, paper


«Կերպար բազմանկյան մեջ», 1984
Թուղթ, ակվատինտ, դրոշմում

A Personage Within a Polygon, 1984
Aquatint, stamping, paper

«Պուլի 1», 1985
Թուղթ, ակվատինտ, դրոշմում

Puli 1, 1985
Aquatint, stamping, paper








«Կանացի մերկանկար», 1930-ականներ
Թուղթ, մատիտ

Female Nude, 1930s
Pencil, paper




«Պաստառի դիզայն», 1928
Թուղթ, գուաշ, մատիտ

Wallpaper Design, 1928
Gouache, pencil, paper

«Պաստառի դիզայն», 1928
Թուղթ, գուաշ, մատիտ

Wallpaper Design, 1928
Gouache, pencil, paper



> Գարաբեդ Մոմճեան

1922 Ստամբուլ, Թուրքիա – 2006 Փարիզ, Ֆրանսիա

Միջազգային բազում արվեստագետների պես, քսաներորդ դարի կեսերին Ֆրանսիայում գործող հայ նկարիչներից շատերն էլ, անխուսափելիորեն տարվում էին այդ երկրի վեհատեսիլ բնությամբ և քաղաքային տեսարաններով, որոնք այնքան լավ էին փոխանցվում՝ լույս ու մթնոլորտ պատկերող գեղանկարչական էտյուդների: Քչերն են, այնուամենայնիվ, եղել նույնքան հետևողական այդ առումով, որքան Գարաբեդ Մոմճեանը՝ նկարիչ, ով ըստ էության, իր գործունեության ընթացքում միայն ստեղծել է Փարիզի և այլ եվրոպական բնակավայրերի յուղաներկ ու ջրաներկ տեսարաններ:

Վաղ տարիքում Ֆրանսիա արտագաղթած Մոմճեանն իր մասնագիտական ունակություններին հիմնականում հասել է ինքնակրթությամբ: Նա շատ արագ է աճել որպես նկարիչ՝ սկսելով ցուցադրվել տարբեր փարիզյան սալոններում դեռևս իր քսանական-

ներում: Մոմճեանը զարգացրել էր թեթև ուրվագծերով և կիսաթափանցիկ երանգներով կառուցված իր ուրույն ոճական մոտեցումը, որի շնորհիվ նրան հաջողվում էր հեշտությամբ որսալ տարվա եղանակների և օրվա ժամերի փոփոխական էֆեկտները: Թեև նա եղել է հայտնի իմպրեսիոնիստներ Պիսարոյի և Մորիս Ուտրիլոյի հետևորդը, Մոմճեանի մեկամաղձոտ բնապատկերներն ավելի էական աղբյուրներ ունեն հետպատերազմյան ֆրանսահայ նկարիչների՝ Ժանսեմի և հատկապես Գառզույի հայեցակարգերի հետ: Թախիծով և տագնապի քիմքային զգացողությամբ համակված նրա տեսլականը դիտարկում է բնությունն ու մարդաստեղծ միջավայրն իբրև անէացման եզրին ճոճվող, փխրուն մի աշխարհ: (ՎԳ)

Գրականություն

Onnig Avedissian, էջ 287; Դանիել Դզունի, էջ 347; Շահեն Խաչատրյան, էջ 115

Garabed Momdjian

1922 Istanbul, Turkey – 2006 Paris, France

Like most other international artists, many of the Armenian painters who worked in France during the first half of the twentieth century, were inevitably seduced by the country's graceful natural and urban views that translated so well into painterly studies of light and atmosphere. However, few were as dedicated in this regard, as was Garabed Momdjian – a painter who appears to have only made oil and watercolor landscapes of Paris and other European cities throughout his entire career.

Having emigrated to France at an early age, Momdjian learnt his métier mostly through self-education. His progress as an artist was rapid and he was already exhibiting at various Parisian salons in his early twenties. He developed a characteristic style of briskly drawn lines and translucent tones that deftly captured the changing effects of seasons and weather. Though following in the steps of great impressionists such as Pissarro and Maurice Utrillo, Momdjian's melancholic landscapes

Հտկար (Էդգար) Շահին

1874 Վիեննա, Ավստրիա – 1947 Փարիզ, Ֆրանսիա

D
R
E
A
M
E
R
S

A
N
D

E
X
I
L
L
E
S

.

C
C
B
J
J
C
O
R
U
C
B

L
C
J
C
B
J
C
C
F
O
U
C
U
S

Էտկար Շահինը, անշուշտ, քսաներորդ դարակազմի տպագրական գրաֆիկայի խոշորագույն հայազգի արվեստագետն է: Կյանքի մեծ մասն անցկացնելով Ֆրանսիայում, նրա ժառանգության նշանակությունը ֆրանսիական արվեստի սոցիալական ուղղվածության զարգացման համար՝ լայնորեն ընդունված փաստ է: Շահինը նաև ուղենշային կերպար էր սփյուռքում և, անգամ, Խորհրդային Հայաստանում գործող բազմաթիվ երիտասարդ հայ արվեստագետների համար: Հանրապետության հինադրման առաջին տարիներից իսկ, նրա ստեղծագործությունը ներառված էր արդի հայկական արվեստի պատումներում: Թեպետ նա գերադասում էր Փարիզի բանվորական դասին և ընչազուրկ մարդկանց կյանքին առնչվող թեմաները, Շահինը նաև ուղղել է իր հայացքը դեպի բուրժուազիայի արվեստային բոհեմի աշխարհը՝ ստեղծելով բարձր արդիականության շրջանի եվրոպական քաղաքակրթության զարմանալիորեն հարուստ համայնապատկեր: Իբրև դիմանկարի փայլուն վարպետ ու գրքերի նկարազարդող, Շահինը նաև հեղինակել է իր ժամանակի նշանավոր դիմանկարներից մի քանիսը, հաճախ պատկերելով այն գրողներին, ում գործերը նա նկարազարդում էր (Անատոլ Ֆրանս, Մորիս Բարես, Գյուստավ Ֆլոբեր, Օկտավ Միրբո, Ժորիս-Կարլ Լյուիսմանս և Կոլեթ):

Շահինը ծնվել է բարձրաշխարհիկ միջավայրում: Նրա հայրը Օսմանյան բանկի ղեկավարներից էր ու հնարավորություն ուներ ֆինանսա-

վորելու որդու կրթությունը Վենետիկի գեղեցիկ արվեստների ակադեմիայում, երբ Էտկարն ավարտեց իր միջնակարգ ուսումը Ստամբուլի Մխիթարեան վարժարանում: Ժամանակակից արվեստի համաշխարհային կենտրոնում գտնվելու ցանկությունը մղում է Շահինին դեպի Փարիզ, ուր նա հաստատվել է 1895-ին, շարունակելով ուսումը Ժյուլիան ակադեմիայում: Սկսելով որպես գեղանկարիչ՝ նա շուտով գտնում է իր անահատական ճայնը գրաֆիկայի ասպարեզում՝ վարպետանալով չոր ասեղի, ակվատինտի, փափուկ լաքի, ինչպես նաև պաստելի տեխնիկաներում: 1896-ին նա հաջողությամբ մուտք է գործում արվեստի փարիզյան բեմ իր «Ողբալի կյանք» շարքով: Դիտորդներին ցնցել էր այն անզիջում ռեալիզմը, որով Շահինը պատկերել էր Փարիզի աղքատների տառապանքները: Սակայն, թշվառության այդ էսթետիկապես ցայտուն պատկերները նաև գործնական վերաբերմունքի կոչ էին ու դիրքավորում էին Շահինին իբրև քաղաքականորեն տոգորված նկարչի, ով գործածում էր իր արվեստը մարդու հիմնարար իրավունքների մասին հանրությանն իրազեկելու նպատակով: Մշակութային հաստատություններն շռայլորեն գնահատել են այս ջանքերը՝ շնորհելով Շահինին 1900-ի Փարիզի Համաշխարհային ցուցահանդեսի և 1903-ի Վենետիկի Բիենալեի ոսկե մեդալները, ի թիվս այլ մրցանակների: Նրա հեղինակությունը եվրոպական արվեստում լիովին հաստատվեց, երբ 1932-ին նկարիչը պարգևատրվեց Ֆրանսիայի Պատվո Լեգիոնի շքանշանով:

«Հանրակառքը», 1910-ականներ
Թուղթ, օֆորտ, չոր ասեղ


The Omnibus, 1910s
Drypoint etching, paper



«Տղայի դիմանկար», 1940-50-ականներ
Թուղթ, մատիտ

Portrait of a Boy, 1940s-50s
Pencil, paper







«Վիշտ. եռապատկեր», 1970-ականներ
Թուղթ, մետաքսատպություն

Grief: Tryptich, 1970s
Silkscreen, paper

> Տիգրան Փոլատ (Փոլատեան)

1874 Ալեքսանդրիա, Եգիպտոս – 1950 Շարպոն, Ֆրանսիա

Որպես հիանալի վարպետությամբ ու երևակայությամբ օժտված գրաֆիկ նկարիչ՝ Տիգրան Փոլատը դարձավ իր ժամանակի նշանավոր գրքային ձևավորողներից մեկը: Նրա նկարազարդած քսանից ավելի հրատարակությունների թվում են այնպիսի հայտնի գործեր, ինչպիսիք են Ա. Զ. Ֆրենչի «Սբ. Կլերի ջրհորը», Լաֆոնտենի «Առակների» ակադեմիական հրատարակությունը և Ռենե Բոյլեպի «Ջրահարսերի և Սատիրների պարը», որոնք համարվում են քսաներորդ դարասկզբի ֆրանսիական պատկերազարդման գլուխգործոցներ:

Ունևոր եգիպտահայ ընտանիքում ծնված Փոլատը քսան տարեկանում տեղափոխվեց Փարիզ՝ իրավագիտություն ուսանելու, սակայն շուտով թողեց ուսումն ու դարձավ իր հայրենակից և փորագրության ծագող աստղ՝ Էտկար Շահինի աշակերտը: Հետևելով վերջինիս խորհրդին՝ նա նույն ժամանակ ընդունվեց Ժյուլիանի ակադեմիա, որտեղ նրա ուսուցիչներն էին ակադեմիկոսներ Ժան-Պոլ Լորանսը և Բենյամին-Կոնստանը: Փոլատը մասնագիտացավ չոր ասեղի տեխնիկայում, ստեղծելով իր ուրույն՝ մանրադրոքի նմանվող գծանկարչական ոճը, որը նրա տպածոներին հաղորդում է երանգային խտություն և յուրօրինակ փափկություն: Սա հատկապես նկատելի է Փոլատի կանացի մերկանկարներում և դիմանկարներում՝ ժանրեր, որոնց նկարիչն անդրադարձել է իր ամբողջ ստեղծագործության ընթացքում:


Վիգեն Գալստյանի հավաքածուի մաս են կազմում Փոլատի յոթ աշխատանք, որոնցից երկուսը ներկայացված են այս ցուցադրությանը: «Կինը ծովափին» կոմպոզիցիայում նկարիչն օգտագործում է «սալոնային» մոտիվ՝ անձնատուր լինելով տարատեսակ պատկերային

էֆեկտների: Կնոջ առաձգական մարմնի մետաքսյա փափկությունը, ջրի արտացոլվող մակերևույթը և ժայռերի կոշտ եզրերը շոշափելի են դառնում շնորհիվ ճարտարորեն համատեղված հակադիր նկարչական տեխնիկաների: Այս երազանման տեսարանը ցույց է տալիս Փոլատի հակումը ռոմանտիզմի և սիմվոլիզմի հանդեպ. փիլիսոփայական և ռճական ուղղություններ, որոնք լիովին համապատասխանում էին՝ սեռական ցանկությամբ, միստիցիզմով և հոգեբանական վիճակներով հետաքրքրված նկարչի աշխարհընկալումները:

Թեպետ իր արվեստային հենակետն անխզելիորեն գամված էր դասական և ռեալիստական արվեստին՝ հղվելով հատկապես Դա Վինչիի, Միքելանջելոյի և Ռեմբրանդտի ստեղծագործությանը, Փոլատին չի կարելի որակել իբրև ներամիտ պահպանողական: 1920-ականներից ի վեր նա զգուշաբար «թարմացնում» էր իր ոճը՝ ներառելով իմպրեսիոնիզմից և արտ դեկոյից փոխառնված տարրեր: Ի վերջո նա կհանգեր գեղագիտականորեն ավելի ազատ նկարչական ձևաչափի, որն առավել համահունչ էր օրվա պահանջներին: 1948-ին արված «Խաչի ճանապարհը» ներկայացնող մեծածավալ օֆորտների սյուիտը, ինչպես նաև Լաֆոնտենի «Առակների» նկարազարդումներից «Երկու սիրուհիներ» թերթը, դիրքավորում են Փոլատին՝ որպես քննադատորեն զգոն մտածողի, ով աշխատում էր վսեմ և պիղծ թեմաների միջև՝ ջանալով մեկնաբանել բարոյականության սահմաններն ու հասարակական հարաբերությունների խրթին կողմերը:

Փոլատը հայերեն չէր խոսում և առանձնապես ներգրավված չէր ֆրանսահայ համայնքում: Այնուամենայնիվ, նրա գործերը հաճախ քննարկվում էին հայկական մամուլում և նա





Հակոբ Սեմերճյան (Ֆեբյուս),
Արշակ Չոպանեանի դիմանկարը

Hakob Semerdjian (Phebus),
Portrait of Arshak Tchobanian

1938

Հանդիպում Ֆեբյուս ստուդիոյի
ձեղնահարկում, Փարիզ: Դաշնամուրի մոտ՝
կոմպոզիտոր Գուրգեն Ալեմշահ:
Ձախից այց՝ Նուբար Արաբեան,
գեղանկարիչ Հրանդ Ալեանաք,
Հակոբ Սեմերճյան, Ֆիլիփ Աղազարեան,
բանաստեղծ՝ Բիզանդ Թօփալեան
և Գեղամ Քերեսթեճեան

Meeting in the attic of Phébus studio, Paris.
At the piano, the composer Kourken Alemshah.
From left to right, Noubar Arabian,
the painter Hrand Alyanak,
Hagop Semerdjian,
Philip Aghazarian, the poet Puzant Topalian
and Kegham Kerestedjian.

1935

